Արտատպված է՝ Շոլոմ-Ալեյխեմ, Վիպակներ և պատմվածքներ, Ե., Հայպետհրատ, 1964: Ռուսերենից թարգմանեց՝ Օլգա Սանահյանը:

ՁԱԽՈՐԴԸ

— Դուք գողերի մասի՞ն եք ասում,— մեր խոսակցությանը խառնվեց մի պճնատես ճամփորդ, որ չէր բաժանվում իր փոքրիկ ճամպրուկից և պահպանում էր աչքի լույսի պես: (Գիշեր էր: Փոստային գնացքին սպասելով, որ ուշացել էր մեկ և քառորդ ժամ, մենք երեքովս «երկրորդ կարգով ճամփորդող քաղաքացիների» սպասարանում ժամանակ էինք սպանում՝ զրուցելով գողերից ու գողություններից):— Ուրեմն խոսքը գողերի՞ մասին է: Դա հենց իմ արհեստին է վերաբերում: Այնքան գողություն, որքան մեր գործում է լինում, դուք ոչ մի տեղ չեք գտնի: Գոհարեղեն ասածդ էդպես բան է: Գոհարեղենի գայթակղությունն այնքան մեծ է, որ դրան անմիջապես անձնատուր են լինում նույնիսկ գնորդները: Ավելի ճիշտ, ոչ թե գնորդները, այլ գնորդուհիները՝ տիկինները: Ամեն մի նոր, անծանոթ տիկնոջ, մենք հետևում ենք աչքներս չորս արած: Բայց հեշտ բան չէ ակնեղեն գողանալը: Պարծենկոտություն չհամարվի, ինչքան ժամանակ որ ակնեղենի առևտուրով եմ զբաղվում, ինձ հետ դեռ գողություն չի պատահել: Բայց եթե քեզ վիճակված է խմել դառնության բաժակից... ինչևէ, լսեցեք:

Ըստ էության ես ոչ մի ակնագործ էլ չեմ: Այսինքն, կարծես թե ակնագործ եմ, բայց ակնագործությամբ չեմ զբաղվում: Ես միայն և միայն ակնեղեն եմ վաճառում, առնում եմ և նորից ծախում: Իմ գործը գլխավորապես մեծածախ է, և դրանով գլխավորապես զբաղվում եմ օտար տեղերում, տոնավաճառներում կամ էլ, եթե գտնում եմ մի կարգին գնորդի հետք, ձեռքս եմ առնում ճամպրուկս, հենց սա, նստում գնացք և ճամփա ընկնում:

Այդպես եղավ նաև այս անգամ. ականջիս հասավ, թե Եգուպեց քաղաքում, մի հարուստ կա, որը պատրաստվում է աղջկան պսակել: Պարզ է, որ առանց ակնեղենի գործը յոլա չի գնա: Ազնվորեն ասած, Եգուպեցում իրենց ակնավաճառներն էլ հերիք ու հերիք են, նույնիսկ շատ են, քան հարկավոր է: Բայց դրանք տարբեր բաներ են: Այնտեղ թեկուզ հարյուր հազար ակնավաճառ էլ լինի, ոչինչ, միայն թե իսկական գնորդի հոտն առնեմ, իսկ հետո, ես ցույց կտամ, թե փողերն ում գրպանը կմտնեն, ի՞մ, թե նրանց: Ակնեղենի վաճառականը պետք է հունարով լինի: Դա նուրբ գործ է: Պետք է ամեն մի մանրուքը իմանաս, ի՜նչ ցույց տաս, ինչպե՜ս ցույց տաս, ո՜ւմ ցույց տաս: Գլուխս չեմ գովում, ես ընդհանրապես պարծենկոտություն չեմ սիրում, միայն մի բան կասեմ, դա կուզեք ակնագործներից էլ հարցրեք, նրանք էլ կհաստատեն, որ ինձ հետ բաս մտնելը հեշտ չէ: Այնտեղ, ուր մեկ ուրիշը հարյուրանոց է շահում, ես երեք հարյուրանոց եմ շահում: Այդ գիտությունը հինգ մատիս պես գիտեմ:

Մի խոսքով, ճամփա ընկա Եգուպեց: Հարմար ապրանք վերցրի հետս, վատ չէր լինի, որ մենք ամենքս էլ ունենայինք այնքան բարիք, որքան տեղավորել էի այն ժամանակ հենց այս ճամպրուկիս մեջ: Մտա վագոն, նստեցի... Ճամպրուկս, հասկանալի է, ամբողջ ուժով հուփ եմ տալիս, աչքս վրայից չեմ կտրում: Ննջելու մասին, որ խոսք լիներ չի կարող: Ապրանք ես տանում — մի՛ քնիր: Վագոն եկող ամեն մի նոր եկվորի նայում ես աչքերդ չռած. հո գող չի՞: Դե ճակատին գրած չի:

Այդպես, կամոքն աստծո, սոված, անքուն գնացի մի ցերեկ, գնացի մեկ գիշեր և վերջապես ժամանեցի Եգուպեց քաղաքը, գնացի հարուստի մոտ ու ապրանքս ցույց տվեցի: Խոսեցինք էսպես և էնպես, դրինք, վերցրինք էնքան, որ էլ ասելու չի, բայց ինչպես հաճախ պատահում է, բան դուրս չեկավ, փողի հոտ չի գալիս:

Հարուստների մասին ես վատ բան չեմ ասում, թող դրանք ամենքն էլ գետնի տակն անցնեն: Հոգիդ բերանովդ դուրս են բերում: Ամեն մի քարը հարյուր անգամ շոշափում են, տնտղում. հոտ քաշում, իսկ երբ գալիս է փող տալու ժամանակը, ետ-ետ են գնում: Դե լավ, ճարդ ինչ: Ծախեցիր, չծախեցիր, թռիր ետ, մլուլ անելու ժամանակ չի, թռչելու էլ դե, առանձնապես տեղ չունես, բայց դե

թռչում ես: Թռա, իհարկե, կառքը և եկածս ճանապարհով եկա իջա կայարան: Հանկարծ լսում եմ ինչ-որ մեկը ետևիցս ձայն է տալիս. «Քեռի՛, քեռի՛»: Շուրջս նայեմ, տեսնեմ մի երիտասարդ վազում է ետևիցս կրնկակոխ ու ճամպրուկը թափահարում, իսկ ճամպրուկն էլ իսկը իմիցն է, և ասում է.

— Ահա՛, սա վայր գցեցիք:

Վա՛յ ինձ, վա՛յ իմ գլխին: Ախր դա իմ ճամպրուկն է: Որտե՞ղ: Ե՞րբ: Ինչպե՞ս... նշանակում է ինձ վիճակված էր ճամպրուկը կորցնել, իսկ երիտասարդին՝ գտնել: Դե, էլ ինչ ասեմ: Ես, իհարկե, նետվեցի երիտասարդի վրա, սկսեցի ձեռքը թոթվել ու ասել. «Շնորհակա՛լ եմ, աստված ձեզ առողջություն ու հաջողություն տա: Շնորհակալություն, նորից ու նորից շնորհակալություն»: Իսկ նա պատասխանում է. «Մեծ բան չէ»: Ես ասում եմ. «Ինչպե՞ս թե մեծ բան չէ»: Դուք ախր, ասում եմ, կյանքս փրկեցիք: Դուք, ասում եմ, մի այնպիսի բան արեցիք, որ ոչ երկրային, ոչ էլ երկնային գանձերը հերիք չեն անի ձեզ հատուցելու: Ասացե՛ք, որքա՞ն տամ ձեզ: Ասացե՛ք, մի ամաչեք»: Այստեղ ես ձեռքս տարա գրպանս: Իսկ նա պատասխանում է. «Եթե, ինչպես դուք եք համարում, որ ես ազնիվ գործ եմ արել, ուրեմն ինչո՞ւ պիտի ձեզնից փող վերցնեմ»: Լսելով այսպիսի խոսքեր, ես, իհարկե, վրա եմ պրծնում երիտասարդին և սկսում համբուրել: «Միայն աստված կարող է ձեզ հատուցել արժանավոր կերպով: Իսկ ես միայն կարող եմ հրավիրել, ասում եմ, ինձ հետ նստել, ասում եմ, մի-մի թաս գցել»: «Թասից չեմ հրաժարվի, ասում է: Շնորհակալ եմ, մեծ հաճույքով»: Այդտեղ մենք բարձրացանք կառք ու գնացինք, ոչ թե կայարան, իհարկե, էլ ինչ կայարան, այլ կաֆե, որ նստենք ու մի քիչ բան ուտենք:

Կաֆեում ես զբաղեցրի առանձին սենյակ, լի ու առատ ամեն ինչ պատվիրեցի և այդտեղ իմ և երիտասարդի միջև սրտագին զրույց սկսվեց: Երիտասարդը ինձ դուր էր եկել ոչ միայն այն պատճառով, որ նա կարելի է ասել, փրկել էր կյանքս, այլ պարզապես՝ հենց այնպես: Դա մի լավ տղա էր: Նա ուներ սքանչելի դեմք, խորունկ, սև, խիստ աչքեր, տղա հո չէր, ոսկի էր: Դրան էլ ավելացրած՝ չտեսնված ամաչկոտ: Ես նրան կարգադրեցի չամաչել, պատվիրել ինչ որ սիրտը ուզում է, ամենալավը և ամենահամեղը, իսկ ես, հենց որ նա պատվիրում է որևէ բան, հրամայում եմ բերել կրկնակի: Մենք կարգին կերանք ու խմեցինք, ինչպես ընդունված է օրենքով: Մինչև վերջ չքշեցինք, աստվա՛ծ չանի: Հրեան չափը ճանաչո՛ւմ է:

Բայց երբ, ինչպես ասում են «կոնծաբանելուց թունդ առավ կայսեր սիրտը», ես իմ փրկարարին ասացի. «Դուք գիտե՞ք, թե ինձ համար ինչ արեցիք: Էլ չեմ ասում, որ օգնեցիք փրկելու հսկայական հարստություն, ասում եմ, երանի ես և դուք ունենայինք այնքան, որքան որ ինձնից պիտի գանձեին այստեղ եղած ապրանքի համար: Ուրիշի հարստությունը, ասում եմ, սրբազան է: Դուք, ասում եմ, ոչ թե միայն կյանքս փրկեցիք, եթե դուք չլինեիք, ասում եմ, ես կկորցնեի բարի անունս, որովհետև եթե վերադառնայի առանց այս ճամպրուկի, իմ պարտատերերս կասեին, որ այդտեղից խարդախության հոտ է փչում, հենց այնպիսի խարդախությունների, որոնց համար մի հատ են մեր ակնագործները: Մի ծածուկ տեղ ապրանքը թաքցնում են և տարածում, որպես թե իրենց թալանել են: Այն ժամանակ, ասում եմ, ինձ միայն մի բան կմնար, պարան առնել ու առաջին իսկ պատահած ծառից կախվել: Խմենք, ասում եմ, ձեր առողջության կենացը, աստված թող հաջողություն տա ձեր բոլոր գործերում: Եկեք պռոշտի անենք, քանի որ, ասում եմ, արդեն գնալու ժամանակն է:

Մնաս բարով արեցի, հաշիվներս մատուցողի հետ մաքրեցի, ուզում եմ ճամպրուկս վերցնեմ, ավա՛ղ: Ոչ ճամպրուկը կա, ոչ երիտասարդը: Չքացել են:

Ես ուշաթափվեցի:

Ինձ, իհարկե, սկսեցին ուշքի բերել: Ուշքս գլուխս եկավ և հո՛պ, նորից նվաղեցի: Միայն այն բանից հետո, երբ նորից ուշքի բերեցին, տագնապ բարձրացրի, ոտքի հանեցի Եգուպեցի ամբողջ ոստիկանությանը, ինչ ասես չխոստացա, նրանց հետ ոտքի տակ տվեցի բոլոր անառականոցները, մտա ամեն ծակուծուկ, հանդիպեցի բոլոր նշանավոր գողերին, բայց ամենը իզուր: Իմ երիտասարդը ասես գետնի տակն էր անցել: Ես հուսահատվեցի, աշխարհն աչքիս սևացավ:

Փռվեցի իմ համարում, անկողնու վրա և սկսեցի տալ ու առնել հետևյալ դառը միտքը. «Ինչպես ինձ վերջ տամ: Դանակով խփեմ, օղակով խեղդվեմ, թե գնամ ու նետվեմ Դնեպրը»: Եվ ահա ես պառկել եմ ու այսպիսի մտքերի հետ եմ, հանկարծ լսում եմ՝ դուռը ծեծում են: Ոստիկանատնից մարդ են ուղարկել ետևիցս. պարզվում է, որ, բայց և այնպես, բռնել են աստծու ծառային՝ ճամպրուկով, ապրանքն էլ հետը:

Հարկ կա՞ ձեզ բացատրելու, թե ի՜նչ կատարվեց ինձ հետ, երբ ես նորից տեսա իմ ճամպրուկը, իմ գոհարեղենը: Նորից ուշաթափվեցի: Դա արդեն ինձ մոտ սովորություն է դարձել, նվաղում եմ: Իսկ երբ սթափվեցի, մոտեցա իմ երիտասարդին և ասացի. «Չեմ հասկանում, ասում եմ, ինձ բացատրեք խնդրեմ, թե չէ կգժվեմ: Ինչո՞ւ, ասում եմ, երբ դուք գտաք իմ ճամպրուկը, կրնկակոխ վազեցիք իմ ետևից և ոչ մի կերպ չէիք ցանկանում ձեր ազնիվ արարքի դիմաց փող վերցնել: Բայց բավական էր դեմքս շրջեի, որ դուք թռցնեիք իմ ունեցվա՛ծքը, իմ գա՛նձը, իմ հոգի՜ն: Ախր, ասում եմ, դուք քիչ մնաց ինձ կործանեիք, մի րոպե էլ անցներ, ասում եմ, ես արդեն էն աշխարհում կլինեի»: Իսկ նա, այդ երիտասարդը, իր կապույտ, խորունկ, խիստ աչքերով նայեց ինձ և հանդարտ այսպես պատասխանեց. «Դրանք իրարից անկախ բաներ են: Ազնվությունը, ազնվություն է, իսկ գողությունը, ասում է, իմ մասնագիտությունն է»: Ես ասում եմ. «Երիտասարդ, դուք ո՞վ եք»: «Ո՞վ պիտի լինեմ: Ես, ասում է, եղած-չեղած մի թշվառ գող եմ, ձախողակ գող. մի տուն լիքը երեխեք ունեմ, իսկ բախտ՝ ոչ մի գրոշ: Իմ փեշակը ոնց որ, իսկապես, թեթև է, բայց բախտս երբեք չի բերում: Իհարկե, տրտնջալը մեղք կլինի, փառք աստծու, աշխատանք կա, բայց ցավը նրանումն է, ասում է, որ շատ ձախորդն եմ: Հաջողություն չկա՛ ու չկա՛»:

Միայն հետո, վագոնում գլխի ընկա, որ հիմարություն եմ արել: Ախր ես կարող էի ինչ-որ մի հասարակ զիզի-բիզիով նրան ազատել: Արժե՞ր արդյոք, որ ես նրա հանդեպ գործի դնեի, այսպես ասած՝ իմ պատժիչ ձեռքը: Թո՛ղ դրանով մի ուրիշը զբաղվեր...

Ի դեպ, չէի՞ք կամենա ալմաստ ականջօղեր՝ կանխիկ փողով: Ցանկանո՞ւմ եք, ցույց տամ: Այդպիսի ալմաստներ դուք ձեր երազո՛ւմն էլ չեք տեսել: Առաջի՜ն տեսակի, Է՛քստրա...